

## ԲԱՑԱՌԻԿ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Անի Միքայելյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ*

Քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրներից մեկը քաղաքացիական գործի ճիշտ և ժամանակին քննությունն ու լուծումն է: Դա հնարավոր է դատարանների գործունեության հստակ կազմակերպման միջոցով՝ իրական և արդյունավետ դատավարական նորմերի առկայությամբ: Այս առումով շատ կարևոր են ընդդատության կանոնների կարգավորման հստակությունը և դատարանների կողմից դրանց պահպանումը արդարադատություն իրականացնելիս<sup>1</sup>:

Ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա քաղաքացիական գործերի ընդդատությունը որոշվում է տարածքային ընդդատության կանոնների միջոցով: Այսինքն՝ ցանկացած գործի քննությունը պետք է իրականացվի ոչ թե հայցվորի ընտրած դատարանում, այլ այն դատարանում, որը հստակ սահմանված է օրենքով և իրավասու է քննելու նշված կատեգորիայի գործը:

Տարածքային ընդդատության նպատակն է միևնույն օղակի դատարանների միջև գործերը բաշխվեն համաչափ՝ կողմերի տնտեսական և անձնական շահերի հաշվառմամբ, որպեսզի կողմերի համար ապահովվեն արդարադատության մատչելիությունը և տնտեսվար ու արագ դատավարություն<sup>2</sup>:

Տարածքային ընդդատության առանձին տեսակների սահմանման նպատակները տարբերվում են իրարից. մի դեպքում ընդդատության կանոնների սահմանման հիմքում դրված է դատարանի, մյուս դեպքում՝ կողմերի մասնավոր շահը, մեկ այլ դեպքում՝ և՛ դատարանի, և՛ կողմերի շահերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը<sup>3</sup>, սահմանելով ընդհանուր տարածքային ընդդատություն, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան (ՀՀ ՔԴՕ 21-րդ հոդված), միաժամանակ սահմանել է նաև տարածքային ընդդատության այլ տեսակներ, այդ թվում՝ շահագրգիռ անձանց հնարավորություն տալով փոխադարձ համաձայնությամբ փոխելու տարածքային ընդդատությունը՝ բացառությամբ բացառիկ ընդդատության:

Բացառիկ ընդդատությունը տարածքային ընդդատության հատուկ տեսակ է, որի կանոնները սահմանում են որոշակի գործերի շրջանակը, որոնց քննությունը և լուծումը իրականացվում են օրենքով հստակ սահմանված դատարանների կողմից՝ բացառելով այլ դատարանում տվյալ գործերի քննության վերաբերյալ կողմերի համաձայնության հնարավորությունը: Այսպիսի ընդդատության իմաստը այն է, որ հայցի առարկան այնքան սերտորեն է կապված որոշակի վայրի հետ, որ այդ վայրի դատարանը դառնում է միակ պատշաճ ատյանը: Բոլոր այդպիսի դեպքերում տարածքային ընդդատությունը վերապահվում է բացառապես տվյալ դատարանին:

<sup>1</sup> Տե՛ս *Кузнецова Е. В.* Институт подсудности в гражданском процессуальном праве Российской Федерации, Дисс. канд. юрид. наук: Москва, 2004, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս *Fasching H.W.* Lehbrunch des osterreichischen Xivilproze Brechts. S. 143:

<sup>3</sup> Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53): Այսուհետ նաև՝ ՀՀ ՔԴՕ:

Իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր կարծիքներ բացառիկ ընդդատության կանոնների սահմանման նպատակների և ընդդատության այս տեսակի որոշման չափանիշների վերաբերյալ: Այսպես, տարածված է այն տեսակետը, որ բացառիկ ընդդատության կանոններով հարուցվող հայցերը կարող է ավելի արագ և ճիշտ քննել այն դատարանը, որտեղ գտնվում է վեճի առարկա հանդիսացող գույքը, քանի որ այդ գործերի քննությունը, որպես կանոն, կապված է լինում տեղում մանրակրկիտ ստուգողական գործողությունները իրականացնելու, շինությունները զննելու, հարևաններին հարցաքննելու հետ<sup>1</sup>:

Քանի որ բացառիկ ընդդատության կանոններով սահմանվող գործերով վեճի առարկան հիմնականում անշարժ գույքն է, որը գտնվում է սահմանված դատարանի տարածքում, այդ պատճառով այլ դատարանում գործի քննությունը էականորեն կարող է ձգձգել դատավարությունը և դատական հանձնարարությունների իրականացման անհրաժեշտություն առաջացնել, բացասաբար անդրադառնալ դատական քննության անմիջականության սկզբունքի վրա<sup>2</sup>:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ քննվող գործերով վեճերի լուծումը կարող է վերաբերել ոչ միայն վիճող կողմերի իրավունքներին, այլև շոշափել այդ գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը: Անշարժ գույքի գտնվելու վայրում գործի քննության դեպքում վեճի լուծման հարցում նյութական շահ ունեցող երրորդ անձինք հնարավորություն են ունենում ժամանակին ստանալու տեղեկատվություն նման վեճի ծագման մասին: Դա դրսևորվում է ոչ միայն դատավարության գոյության մասին տեղեկության որոնման պարզեցմամբ, այլև դատարանի իրազեկվածությամբ՝ ունենալ ավելի մեծ հնարավորություն տեղեկանալու երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի մասին, որոնք ներգրավված չեն գործի քննությանը<sup>3</sup>:

Չստեմացնելով վերը նշված բոլոր տեսակետների արդիականությունը՝ այնուամենայնիվ մենք կարծում ենք, որ **բացառիկ ընդդատության սահմանման հիմքում նախ և առաջ դրված է դատարանի շահը**: Այլ կերպ ասած՝ բացառիկ ընդդատության սահմանման հիմնական նպատակը դատարանի համար մատչելիության ավելի բարձր աստիճան սահմանելն է, այն է՝ դատարանը գործը քննում է այն վայրում, որտեղ գտնվում է վեճի առարկան: Դա հեշտացնում է դատարանի աշխատանքը ապացույցների հավաքման ու հետազոտման ընթացքում, և օրենսդրի մոտեցմամբ դա պետք է հանգեցնի գործի ավելի արագ և ճիշտ լուծման:

Ընդ որում, բացառիկ ընդդատության հիմքում դնելով դատարանի շահը, այն վերջին հաշվով ուղղված է հենց դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը: Այսպես, քաղաքացիական դատավարությունում դատարանի հանրային-իրավական հիմնական գործառույթը գործի ժամանակին և պատշաճ քննելը և լուծելն է, որը ուղղված է շահարգիչ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցվորի ներկայացրած հայցն է, սակայն քաղաքացիական գործով դատական պաշտպանություն տրվում է ոչ միայն հայցվորին, այլև գործին մասնակցող նյութ անձանց: Քաղաքացիական գործը քննելով և լուծելով՝ դատարանը հայցի հիմնավոր լինելու դեպքում պարտավոր է բավարարել այն՝ դրանով իսկ պաշտպանելով հայցվորի սուբյեկտիվ իրավունքը, իսկ հայցն անհիմն լինելու դեպ-

<sup>1</sup>Տե՛ս *Шакарян М. С.* Гражданский процесс: учебник, Глава X, М., 1993, էջեր168-169:

<sup>2</sup>Տե՛ս *Исаенкова О.В.* Гражданское процессуальное право России, учебник / О. В. Исаенкова, А. А. Демичев; под ред. О.В. Исаенковой.- М.: Норма, 2009, էջ 83:

<sup>3</sup>[https://zakon.ru/blog/2014/11/12/problemy\\_podsudnosti\\_sporov\\_o\\_pravax\\_na\\_nedvizhimoe\\_i\\_mushhestvo\\_v\\_kontekste\\_reformy\\_processualnogo\\_z](https://zakon.ru/blog/2014/11/12/problemy_podsudnosti_sporov_o_pravax_na_nedvizhimoe_i_mushhestvo_v_kontekste_reformy_processualnogo_z).

քում պարտավոր է մերժել հայցը՝ դրանով պաշտպանելով պատասխանողի սուբյեկտիվ իրավունքը և անբարենպաստ հետևանքներ առաջացնելով հայցվորի համար: Հետևաբար, ցանկացած պարագայում դատարանի հիմնական գործառույթը հանգում է շահագրգիռ անձանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը:

Բացառիկ ընդդատության կանոնների առանձնացման համար որոշիչ նշանակություն ունի նաև ընդդատության այս տեսակի սահմանման չափանիշների պարզումը: *Մենք կարծում ենք, որ բացառիկ ընդդատության կանոնի սահմանման չափանիշ պետք է հանդիսանա նախ հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը, այնուհետև այդ օբյեկտի հետ կապված այն նյութաիրավական պահանջը, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ:*

*Ասվածի հիման վրա՝ կարծում ենք, որ որպես օբյեկտ պետք է դիտարկվի անշարժ գույքը, իսկ որպես այդ օբյեկտի հետ կապված պահանջ՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ պահանջը:*

Մինչև վերջերս ՀՀ ՔՂՕ-ով կարգավորված չէր այն հարցը, թե որ դատարանին է ընդդատյա այն հայցը, որի շրջանակներում միացված են մի քանի հայցապահանջներ, որոնք ունեն տարբեր ընդդատություն: Այլ կերպ ասած՝ որ դատարանին ընդդատյա կլինի այն հայցը, որի շրջանակներում ներկայացված պահանջներից մեկը ընդդատյա է բացառիկ ընդդատության կանոններով, իսկ մյուսը՝ տարածքային ընդդատության այլ կանոններով սահմանված դատարանին: Եթե ներկայացված պահանջներից մեկը ընդդատյա լինի ընդհանուր տարածքային ընդդատության, իսկ մյուսը բացառիկ ընդդատության կանոնով սահմանվող դատարանին, ապա հայցը բնականաբար պետք է հարուցվի բացառիկ ընդդատության կանոնին համապատասխան, քանի որ վերջինս բացառություն է տարածքային ընդդատության ընդհանուր կանոնից և գերակայություն ունի այդ տեսակի նկատմամբ: Հարցը լուծված է նաև պայմանագրային ընդդատության դեպքում, քանի որ ՀՀ ՔՂՕ-ով հստակ սահմանված է, որ բացառիկ ընդդատությունը չի կարող փոխվել կողմերի համաձայնությամբ:

Բարձրացված հարցը խնդրահարույց էր մասնավորապես այլընտրանքային ընդդատության և բացառիկ ընդդատության նորմերի փոխհարաբերակցության դեպքերում, այսինքն՝ երբ ներկայացված հայցադիմումի պահանջներից մեկը ընդդատյա է այլընտրանքային, մյուսը՝ բացառիկ ընդդատության կանոններով սահմանվող դատարաններին: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև այն իրավիճակներին, երբ հայցադիմումում միացված պահանջներից հիմնականը և ածանցյալը ունեն տարբեր ընդդատություն:

Այս կապակցությամբ հարց էր առաջանում. ինչպե՞ս պետք է ղեկավարվեն դատարանները այն դեպքերում, երբ, օրինակ, ներկայացված հիմնական պահանջի ընդդատությունը վերաբերում է այլընտրանքային տարածքային, իսկ ածանցյալ պահանջը՝ բացառիկ ընդդատությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍՂՈ-787 որոշմամբ արձանագրել է. «Երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է տարբեր դատարաններին ընդդատյա (քաղաքացիական, ընդհանուր իրավասության և վարչական դատարանների առարկայական ընդդատություն) միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը: Հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետևանքներ կայացնող պահանջների լուծման ելքը»:

Այս որոշման հիման վրա կարելի է եզրակացնել, որ եթե մեկ հայցադիմումում միացվեն մի քանի պահանջներ, որոնցից մեկը հիմնական է, իսկ մյուսները՝ ածանցյալ, ապա հայցի ընդդատությունը պետք է որոշվի հիմնական պահանջի ընդ-

դատությամբ: Օրինակ, ենթադրենք Ա-ն հայց է հարուցում ազատագրվման դատապարտված Բ-ի դեմ՝ ամուսնալուծության և ընդհանուր համատեղ կյանքում ձեռք բերված սեփականության նկատմամբ իր բաժինը առանձնացնելու և դրա նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Առաջին պահանջը պետք է դիտել որպես հիմնական, իսկ երկրորդը՝ ածանցյալ, քանի որ դրա բավարարումը կախված է առաջին պահանջի բավարարումից: Ստացվում է, որ այս դեպքում հայցը պետք է քննվի այլընտրանքային ընդդատության կանոնին համապատասխան: Մինչդեռ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ և 85-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկայի մասին» 2005 թվականի սեպտեմբերի 20-ի N 61 որոշման շրջանակներում անդրադառնալով բացառիկ ընդդատության և տարածքային ընդդատության այլ տեսակների կիրառման փոխհարաբերակցության խնդրին, նշել է. «Ընդդատության կանոնների կիրառման համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ և 83-րդ հոդվածները ընդհանուր նորմեր են, իսկ 85-րդ հոդվածը պարունակում է ընդհանուր նորմին կատմամբ գերակայող հատուկ (բացառիկ) նորմ:

Բացառիկ ընդդատության իմաստը հենց կայանում է նրանում, որ *բացառվում է «բացառիկ ընդդատության» ենթակա հայցերի հարուցումը և քննությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ և 83-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոններով»:*

Ստացվում է, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի այս որոշման հիման վրա նախապատվությունը պետք է տրվի բացառիկ ընդդատությանը, ինչն էլ իր հերթին հակասում է հիմնական և ածանցյալ պահանջների դեպքում ընդդատության որոշման վերը բերված դեպքին:

Նշված հարցը իր կարագավորումն է ստացել նոր ընդունված ՀՀ ՔԴՕ-ի 24-րդ հոդվածի 4-րդ մասում, որտեղ սահմանվել է, որ միաժամանակ բացառիկ կայլ տարածքային ընդդատություն ունեցող պահանջներով հայցը ներկայացվում է սույն հոդվածով սահմանված առաջին աստիճանի դատարան:

Մեր կարծիքով, այլընտրանքային կամ բացառիկ ընդդատության կանոններից մեկին նախապատվություն տալու հարցը պետք է դիտարկել վերոգրյալ նորմերի փոխհարաբերակցության պարզումով, որի պարագայում հնարավոր կլինի որոշել, թե նշված նորմերի մրցակցության արդյունքում որին պետք է տրվի նախապատվություն: Կարծում ենք, որ այդ հարցը պետք է լուծվի նախ և առաջ այդ նորմերով սահմանված կանոններին համապատասխան՝ դրանց իրավական բնույթի հաշվառմամբ:

Այսպես, այլընտրանքային տարածքային ընդդատությանը բնութագրական է այն, որ հայցվորին իրավունք է վերապահվում ընդհանուր կանոնի՝ պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանին զուգահեռ՝ որպես այլընտրանք հայց ներկայացնել օրենքով սահմանված այլ դատարան (դատարաններ): Այդպիսի դեպքերում օրենսդիրը արտոնյալ պայմաններ է ստեղծում հայցվորների համար այն գործերով, որոնք շոշոփում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների առավել էական շահերը, և որոնք հատուկ հանգամանքների առկայության պատճառով առաջնակարգ պաշտպանության կարիք ունեն: Այլընտրանքային ընդդատության նշանակությունը այն է, որ նման գործերով որոշակի նախապատվություն է տրվում առավել թույլ կողմին՝ հայցվորին: Այլ կերպ ասած՝ այլընտրանքային ընդդատությունը հայցվորներին որոշակի գործերով տրված արտոնություն է:

Բացառիկ ընդդատության դեպքում դատարանի ընտրությունը, որը իրավասու է քննել տվյալ գործը, իրականացվում է օրենսդրությամբ և կախված չէ կողմերի հայեցողությունից, հարմարությունից կամ ցանկությունից:

Ասվածի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ այլընտրանքային տարածքային ընդդատության կանոնները իրենց բնույթով խրախուսող են, հայցվորների

վիճակը որոշակի գործերով բարելավող: Մինչդեռ բացառիկ ընդդատության պարագայում մենք գործ ունենք ոչ թե խրախուսող, այլ սահմանափակող նորմի հետ:

Հետևաբար, բացառիկ և այլընտրանքային ընդդատության նորմերի մրցակցության դեպքում դրանցից մեկին նախապատվություն տալու հարցը պետք է լուծել հետևյալ հարցադրման միջոցով. ՀՀ օրենսդրությունն ընդհանրապես ո՞ր նորմին է նախապատվություն տալիս՝ խրախուսող, թե՞ սահմանափակող:

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն. «1. Անձի իրավական վիճակը **վատթարացնող** օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը **բարելավող օրենքները** և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

Համանման կարագավորում է նախատեսում նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը:

Կերը նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը նախապատվությունը տալիս է բարելավող նորմին: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ օրենքի հետադարձ ուժի արգելքը տարածվում է ոչ միայն պատասխանատվություն սահմանող օրենքների, այլ նաև ընդհանրապես որևէ կերպ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների վրա, ինչը ենթադրում է, որ նշված սահմանադրական դրույթում ամրագրված արգելքը վերաբերում է ոչ միայն նյութական իրավունքին, այլ նաև վարույթային իրավունքի նորմերին:

Ընդհանուր առմամբ, անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտ ասելով պետք է հասկանալ այն իրավական ակտերը, որոնք անձի համար ունեն որևէ բացասական ազդեցություն<sup>1</sup>: Սակայն ո՛չ ՀՀ Սահմանադրությունը, ո՛չ էլ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը չեն բացահայտում վատթարացնող իրավական ակտի բովանդակությունը:

Ուժը կորցրած «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը մատնանշում էր այն դեպքերը, երբ իրավական ակտը վատթարացնում է անձի իրավական վիճակը, որնց թվին են դասվում նաև իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները **սահմանափակող**, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող ակտերը:

**«Բարելավող»** հասկացության օգտագործումը կարող է ունենալ տարբեր բովանդակություն տարբեր ճյուղային օրենսդրություններում: Մեր կարծիքով, քաղաքացիական դատավարության շրջանակներում անձի իրավական վիճակը բարելավող կհավարվի այն նորմը, որը խրախուսող բնույթ ունի, այսինքն՝ որոշակի հանգամանքների դեպքում սահմանում է որոշակի արտոնություններ դատավարության կողմերից որևէ մեկի համար: Ուստի, կարծում ենք, որ այլընտրանքային ընդդատությունը իր բնույթով բարելավող, այլ կերպ ասած՝ խրախուսող բնույթի նորմեր է պարունակում, իսկ բացառիկ ընդդատությունը, ընդհակառակը, սահմանափակող է: Հետևաբար, այլընտրանքային և բացառիկ ընդդատության կանոնների միջև ընտրությունը պետք է կատարվի այլընտրանքային ընդդատության կանոններին նախապատվություն տալով:

Ասվածի հիման վրա գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ ՔՂՕ-ով սահմանել, որ այն դեպքում, երբ ներկայացված հայցապահանջները (այդ թվում՝ հիմնական և ածանցյալ) ունեն տարբեր ընդդատություն, այսինքն՝ միաժամանակ ընդդատյա են և՛ բացառիկ, և՛ այլընտրանքային տարածքային ընդդատության կանոններով սահմանված դատարաններին, ապա հայցը հարուցվի այլընտրանքային ընդդատության կանոններով սահմանված դատարանին:

Հետևաբար առաջարկում ենք ՀՀ ՔՂՕ 24-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. **«Միաժամանակ բացառիկ և այլընտրանքային ընդդատություն ունե-**

<sup>1</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանդրության մեկնաբնություններ, 2010, էջ 496-498:

**ցող պահանջներով հայցը ներկայացվում է այլընտրանքային ընդդատության կանոններով սահմանված առաջին ատյանի դատարան»:**

ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված են բացառիկ ընդդատության հետևյալ դեպքերը.

**1. Հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից գրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը հարուցվում են հողամասերի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան (ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդված, 1-ին մաս):**

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը բացառիկ ընդդատության այս կանոնի օբյեկտ է դիտարկում ոչ թե ցանկացած անշարժ գույք, այլ միայն հողամասերը, շենքերը, շինությունները: Ասվածի մասին է վկայում այն հանգամանքը, որ հոդվածում «անշարժ գույք» ընդհանրական հասկացության փոխարեն օրենսդիրը օգտագործում է «հողամասեր, շենքեր, շինություններ» բառերը, ինչը պրակտիկայում հաճախ խնդիրներ է հարուցում անշարժ գույքի նկատմամբ քննվող հայցերով: Այսպես, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, օրինակ, թիվ ԵԱԴԴ/0768/02/11 քաղաքացիական գործով 24.08.2011թ. կայացրած որոշմամբ նշել է, որ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձանաչման պահանջը չի կարող նույնացվել հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու պահանջի հետ, և այդ պահանջը պետք է քննվի ընդհանուր տարածքային ընդդատության կանոնով: ՀՀ վճռաբեկ դատարանը նշված գործի շրջանակներում 18.01.2012թ. կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակարանը բնորոշվում է որպես բնակության համար նախատեսված տարածք (շինություն): Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված բացառիկ ընդդատության կանոնը կիրառելի է նաև բնակարանի՝ որպես շինության նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցի նկատմամբ:

Կարծում ենք, որ բացառիկ ընդդատության այս կանոնի օբյեկտ պետք է դիտարկել ընդհանրապես անշարժ գույքը: Հետևաբար, անհրաժեշտ է վկայակոչված նորմում օգտագործվող «հողամասեր, շենքերը և շինություններ» արտահայտությունը փոխարինել «անշարժ գույք» հասկացությամբ, ինչը կբացառի տվյալ կանոնի կիրառման անհարկի սահմանափակումները կամ պրակտիկայում դրա չափազանց նեղ մեկնաբանումը:

Բացառիկ ընդդատության վկայակոչված կանոնը այլ սահմանփակում ևս ունի: Մասնավորապես՝ բացառիկ ընդդատության տվյալ կանոնը կիրառվում է միայն հետևյալ պահանջների վերաբերյալ հայցերով.

**ա. հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու,**

**բ. հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու (վինդիկացիոն հայց),**

**գ. սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից գրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու (նեգատոր հայց):**

Սա նշանակում է, որ օրենսդիրը բացառիկ ընդդատության կանոնի կիրառումը պայմանավորել է ոչ միայն վեճի օբյեկտ հանդիսացող հողամասերի, շենքերի, շինությունների, այլև այդ գույքի նկատմամբ ներկայացված պահանջով: **Այսինքն՝ անգամ այն դեպքերում, երբ հայցի օբյեկտը հողամաս է, շենք կամ շինություն, սակայն ներկայացված պահանջը վկայակոչվածներից որևէ մեկը չի ներառում, ապա հայցը պետք է հարուցվի ընդհանուր տարածքային ընդդատության կանոններով:**

Մինչդեռ դատական պրակտիկայում հանդիպում են բազմաթիվ դեպքեր, երբ անշարժ գույքի հետ կապված մի շարք պահանջներով ընդհանուր տարածքային ընդդատության կանոնները կիրառելու փոխարեն հայցերը սխալմամբ ներկայացվում են բացառիկ ընդդատության կանոններով<sup>1</sup>: Օրինակ, թիվ ԵՄԴ/2814/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 24.10.2014 թ. կայացրած որոշմամբ փաստել է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու պահանջն իր բովանդակությամբ չի կարող նույնացվել վիճակագրության, նեգատոր և սեփականության իրավունքի ճանաչման հայցերից ոչ մեկի հետ, ուստի ենթակա է հարուցման և քննության տարածքային ընդդատության ընդհանուր կանոնով, որպիսի պայմաններում հայցը հարուցելու բացառիկ ընդդատության կանոնը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այս հարցում ևս դատական պրակտիկան ոչ միանշանակ է: Այսպես, օրինակ, թիվ ԵԴԴ/3788/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 10.11.2016 թ. «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշել է. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85 հոդվածը կարգավորում է գործերի բացառիկ ընդդատության կանոնները, իսկ ներկայացված հայցադիմումն ըստ էության ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքից պարտապանի մասն առանձնացնելու և հանցագործությամբ պատճառված վնասի չափով բռնագանձում տարածելու պահանջների մասին է, որի դեպքում կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված՝ բացառիկ ընդդատության կանոնները»:

Սեյ այլ գործով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածում (բացառիկ ընդդատություն) խոսքը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման, և ոչ թե վերականգնման մասին է: Դատարանը գտել է, որ այդ պահանջի դեպքում բացառիկ ընդդատությունը կիրառելի չէ<sup>2</sup>:

ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ բացառիկ ընդդատության կանոնը կիրառելի է միայն սեփականության իրավունքի ճանաչման պահանջի նկատմամբ, իսկ դրա հետ անմիջականորեն կապված սեփականության իրավունքի վերականգնման, դադարեցման պահանջների նկատմամբ կիրառելի համարվել չի կարող:

Մինչդեռ, մեկ այլ գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը արձանագրել է, որ սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջը պետք է քննվի բացառիկ ընդդատության կանոններով<sup>3</sup>:

*Այսպես, եթե բացառիկ ընդդատությունը սահմանված է անշարժ գույքի նկատմամբ ծագող վեճերը առավել արագ և արդյունավետ լուծելու համար, ապա պետք է նշել, որ «անշարժ գույքի հետ կապված վեճեր» կատեգորիան ներառում է ոչ միայն վկայակոչված երեք հայցերը, այլև անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքների վերաբերյալ վեճերը, օրինակ՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելը, անշարժ գույքի նկատմամբ սահմանվող սերվի-*

<sup>1</sup> Մեջբերվող դատական ակտերը վերաբերում են նախկին ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 1-ին մասին, որը ամբողջությամբ նախատեսում էր նույն կարգավորումը, ինչ գործող ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>2</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07 նոյեմբերի 2016 թ. «Հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ» թիվ ԵԱՆԴ/4477/02/16 որոշումը:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2010 թ. թիվ ԵԱՆԴ/1635/02/10 որոշումը:

տուտները, անշարժ գույքի անժամկետ օգտագործման իրավունքը, հողամասի օգտագործման իրավունք ձեռք բերելը և այլն:

Անշարժ գույքը սեփականության իրավունքից առանձնացնելու և առանձնացված մասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք սահմանելը ևս բխում է այդ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, հետևաբար դրանք ևս պետք է քննվեն բացառիկ ընդդատության կանոններով<sup>1</sup>:

Հետևաբար անհասկանալի է օրենսդրի կողմից բացառիկ ընդդատության այս կանոնը միայն վկայակոչված երեք պահանջներով սահմանափակելը:

Նշված հարցի կարգավորման հետ կապված առկա են երկու հիմնական մոտեցումներ: Այսպես, մի շարք պետություններում բացառիկ ընդդատության կանոնը սահմանվում է անշարժ գույքի նկատմամբ հարուցվող բոլոր տեսակի պահանջների նկատմամբ՝ առանց առանձնացնելու պահանջի բնույթը:

Օրինակ, Ուկրաինայի ՔՂՕ 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հայցերը, որոնք ծագում են անշարժ գույքի կապակցությամբ**, հարուցվում են անշարժ գույքի կամ դրա հիմնական մասի գտնվելու վայրի դատարան<sup>2</sup>:

Որոշ պետություններում բացառիկ ընդդատության կանոնի սահմանումը պայմանավորված է անշարժ գույքի նկատմամբ հարուցվող պահանջի բնույթով: Այսպես, Ֆրանսիայի ՔՂՕ 44-րդ հոդվածի համաձայն՝ **անշարժ գույքի նկատմամբ գույքային հայցերը** ընդդատյա են բացառապես այդ անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանին<sup>3</sup>: Իսկ Էստոնիայի ՔՂՕ 99-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են այն հայցերը, որոնց առարկան անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների հետ կապված վեճերն են: Այդ հայցերի ընդդատությունը որոշվում է բացառիկ ընդդատության կանոններով, որոնց թվին են դասվում՝ **անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը կամ դրա հետ կապված այլ պահանջները, անշարժ գույքի սահմանների որոշումը կամ դրա բաժանումը և այլ հարցեր**<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև վավերացված «Քաղաքացիական, քրեական և ընտանեկան գործերով իրավական օգնության կիրառական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի<sup>5</sup> 20-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է բացառիկ ընդդատություն: Այսպես՝ **անշարժ գույքին նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը** բացառապես ընդդատյա են գույքի գտնվելու վայրի դատարաններին:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 07.10.2002 թ. կոնվենցիայի<sup>6</sup> 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և այլ իրային իրավունքների վերաբերյալ հայցերով բացառապես իրավասու են այդպիսի գույքի գտնվելու վայրի դատարանները»:

Ինչպես վերևում նշեցինք, բացառիկ ընդդատության վերաբերյալ այս կանոնի նախատեսման նպատակը վեճի օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի գտնվելու

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, п. 12. Постановления Пленума Верховного Суда РСФСР от 10 июня 1980 г. N 4 "О некоторых вопросах, возникающих в практике рассмотрения судами споров о выде ледолисобственнику и определении порядка пользования домом, принадлежащим гражданам на праве общей собственности".

<sup>2</sup> Տե՛ս Գրաжданский процессуальный кодекс Украины от 18.03.2004 № 1618-IV:

<sup>3</sup> Տե՛ս Новый Гражданский процессуальный кодекс Франции / Пер. с франц. **Захватаев В./** Предисловие: Довгерт А., Захватаев В./ Отв. ред. Довгерт А.. — К., 2004. — էջ 544, 2004:

<sup>4</sup> Ավելի մանրամասն տե՛ս Գրաжданский процессуальный кодекс Эстонии: Принят 20.04.2005, RT 2005, 26, 197. Вступление в силу 01.01.2006:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հունիսի 22-ին, իսկ Ռուսաստանի Դաշնության համար՝ 1994 թվականի դեկտեմբերի 10-ին:

<sup>6</sup> Կոնվենցիան ընդունվել է 07.10.2002 թ., ուժի մեջ է մտել 19.02.2005 թ.:

վայրում գործի առավել արագ և ճիշտ, կողմերի ու դատարանի համար ժամանակի և միջոցների խնայումով լուծելն է, քանի որ այդ գործերի քննությունը, որպես կանոն, կապված է լինում տեղում մանրակրկիտ ստուգողական գործողությունների իրականացման, շինությունների գնման, հարևաններին հարցաքննելու և այլ դատավարական գործողությունների կատարման հետ: Իսկ վկայակոչված գործողությունների կատարման անհրաժեշտությունը առաջանում է ոչ միայն ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասում ներառված պահանջներով գործերի, այլ նաև անշարժ գույքի նկատմամբ ներկայացվող այլ պահանջներով գործերի քննության ընթացքում: **Հետևաբար կարծում ենք, որ բացառիկ ընդդատության այս կանոնը պետք է տարածվի անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների հետ կապված այն պահանջների նկատմամբ, որոնց քննության ընթացքում առաջանում է նշված գործողությունների կատարման անհրաժեշտությունը:** Դրանց թվին կարող են դասվել նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու, անշարժ գույքի նկատմամբ սահմանվող սերվիտուտների վերաբերյալ ներկայացվող պահանջները և այլն:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ, օրինակ, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առանձնացման և առանձնացված մասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք սահմանելը ևս բխում է այդ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, սակայն այս դեպքում նշված դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունը գրեթե չի առաջանում:

Սակայն, բնականաբար, ՀՀ ՔԴՕ-ում հնարավոր չէ սպառիչ թվարկել անշարժ գույքի հետ կապված բոլոր վեճերը, որոնք կարող են քննվել բացառիկ ընդդատության կանոններով: Իսկ առկա կարգավորումը անհիմն սահմանափակում է անշարժ գույքի նկատմամբ բացի հոդվածում մատնանշված երեք պահանջներից այլ պահանջներով գործերի քննությունը բացառիկ ընդդատության կանոններով, որոնք ևս պահանջում են անշարժ գույքի գտնվելու վայրում մի շարք դատավարական գործողությունների կատարում:

Ասվածի հիման վրա՝ գտնում ենք, որ բացառիկ ընդդատության նշված կանոնը անհրաժեշտ է լրացնել և այնտեղ ներառել նաև բոլոր այն պահանջները, որոնք կապված են անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման հետ:

Վերոշարադրյալի հիման վրա՝ առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ կերպ. **«Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը ներկայացվում են անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան»:**

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ անշարժ գույքի վերաբերյալ վեճերով ընդդատության որոշումը հաճախ կարող է դժվարություններ առաջացնել: Օրինակ, եթե ներկայացվում է սեփականության իրավունքի ճանաչման պահանջ հողամասի նկատմամբ, որը գտնվում է երկու կամ ավելի դատարանների իրավաբանական տարածքում, ապա հարց է առաջանում, թե որ դատարան պետք է դիմի հայցվորը: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև այն դեպքերին, երբ հայցադիմումում ներկայացված պահանջներից երկուսը կամ ավելին ընդդատոյա են բացառիկ ընդդատության կանոններով որոշվող տարբեր դատարաններին:

ՀՀ ՔԴՕ-ով այս հարցը կարգավորված չէ: Մի շարք երկրների օրենսդրությամբ ընդունված է այն մոտեցումը, որ այդ դեպքում պետք է առաջնորդվել գույքի հիմնական մասի գտնվելու վայրով, այսինքն՝ հայցը հարուցվում է գույքի հիմնական մասի գտնվելու վայրի դատարանում:

Եթե ընդունենք, որ նշված դեպքերում պետք է առաջնորդվել անշարժ գույքի հիմնական մասի գտնվելու վայրով, ապա առաջ են գալիս մի շարք հարցերը: Նախ՝ ՀՀ օրենսդրությամբ տրված չէ «գույքի հիմնական մաս»-ի հասկացությունը:

Հետևաբար հարց է առաջանում, թե որը պետք է հանդիսանա «անշարժ գույքի հիմնական մասը» որոշելու չափանիշ՝ գույքի տվյալ մասի արժեքը, ծավալը, ձեռնարկատիրական գործունեության մեջ նրա խաղացած դեօրը, թե՞ այլ չափանիշներ: Եթե ընդունենք, որ անշարժ գույքի հիմնական մասը որոշելու չափանիշը դրա շուկայական արժեքն է, ապա այդ դեպքում անհրաժեշտություն կառաջանա կարգավորել նաև այն հարցը, թե ինչպես պետք է որոշվի այդ գույքի արժեքը, մասնավորապես՝ ով պետք է որոշի դա, անհրաժեշտ է արդյոք անշարժ գույքը գնահատող ներգրավել, այդ պարագայում ում վրա պետք է դրվի գույքի հիմնական մասը որոշելու պարտականությունը, և ըստ դրա՝ որ դատարանը պետք է քննի գործը: Բացի այդ, եթե գույքի հիմնական մասը որոշվի գույքի շուկայական արժեքով, ապա առաջանում է հաջորդ հարցը՝ որ պահի դրությամբ պետք է որոշվի գույքի շուկայական արժեքը:

Ավելին, բացառված չէ, որ տարբեր վայրերում գտնվող անշարժ գույքի հիմնական չափը անհնար լինի որոշել՝ դրանց գրեթե հավասար լինելու պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք կարծում ենք, որ այն դեպքերում, երբ ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ գույքային պահանջ, որը գտնվում է երկու կամ ավելի դատարանների իրավաբանական տարածքում, կամ երբ հայցադիմումում ներկայացված պահանջներից երկուսը կամ ավելին ընդդատյա են բացառիկ ընդդատության կանոններով որոշվող դատարաններին, ապա այդ դեպքում պետք է գործի *այլընտրանքային-բացառիկ ընդդատությունը*, այսինքն՝ հայցվորն ինքը կարող է ընտրություն կատարել այն դատարանների միջև, որոնց տարածքում գտնվում է վիճելի անշարժ գույքը: Ընդ որում, իրավասու դատարանի ընտրությունը սահմանափակված է միայն այն դատարաններով, որոնք գործում են անշարժ գույքերի գտնվելու վայրերում, և հետևաբար՝ այդ դատարաններից մեկին դիմելը բացառում է մյուս դատարան դիմելու իրավունքը: Ուստի, հայցվորի կողմից իր գործը քննելու իրավասություն ունեցող բացառիկ ընդդատության կանոններով սահմանված դատարաններից մեկին դիմելու դեպքում այդ դատարանը պարտավոր է հայցադիմումը ընդունել վարույթ:

*Միակ բացառությունը այս կանոնից մեր կարծիքով պետք է սահմանվի այն դեպքերի համար, երբ իրավասու դատարաններից մեկը համընկնում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանի հետ:* Այդ դեպքում, հայցը կհարուցվի պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան, որտեղ գտնվում է անշարժ գույքերից մեկը կամ մի քանիսը:

**2. Անշարժ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան (ՀՀ ՔԴՕ հոդված 24, 2-րդ մաս):**

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ1/0289/02/10 քաղաքացիական գործով 01.07.2011 թվականին կայացրած որոշմամբ, անդրադառնալով այն հարցին, թե քրեական գործով վարույթն ավարտվելուց հետո կալանքի (արգելանքի) տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում որ դատարանին է ընդդատյա շահագրգիռ անձի (գույքի սեփականատիրոջ կամ դրա օրինական տիրապետողի) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ իրավունքի պաշտպանությունը, արձանագրել է, որ օրենսդիրն այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձանց համար սահմանել է իրավունք՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Համանման կարգավորում է նախատեսում նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու

դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան»:

Փաստորեն, օրենսդիրը գույքն արգելանքից հանելու պահանջով սահմանել է բացառիկ ընդդատություն, այն է՝ նման պահանջներով հայցը հարուցվում է բացառապես գույքի գտնվելու վայրի դատարանում:

Հարկ է նշել, որ 1998 թ. ընդունված ՀՀ ՔՂՕ 85-րդ հոդվածը սահմանում էր, որ գույքը արգելանքից հանելու վերաբերյալ հայցերը հարուցվում են այդ գույքի գտնվելու վայրի դատարան (ՀՀ ՔՂՕ հոդված 85, մաս 3):

Ինչպես կարելի է նկատել, վկայակոչված հոդվածում օրենսդիրը օգտագործում էր «գույք» բառը, այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի մասին է:

Մինչդեռ գործող ՀՀ ՔՂՕ-ի բացառիկ ընդդատության այս կանոնը սահմանափակվել է միայն անշարժ գույքը արգելանքից հանելու վերաբերյալ պահանջներով: Կարծում ենք՝ տվյալ կարգավորումը արդարացված պետք է համարել, քանի որ շարժական գույքի պարագայում կիրառելով բացառիկ ընդդատության կանոնը՝ կողմերը իրենք կարող են ընտրել ընդդատյա դատարանը՝ գույքի գտնվելու վայրը փոխելով: Իսկ բացառիկ ընդդատության կանոնի սահմանման հիմնական նախապայմանը այն է, որ բացառիկ ընդդատության դատարանների ցանկը սահմանվում է օրենքով, և կողմերը իրենց հայեցողությամբ այն չեն կարող փոխել:

**3. Ժառանգատուի պարտատիրոջ հայցը ներկայացվում է ժառանգի կամ կտակակատարի հաշվառման (գտնվելու) կամ բնակության, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի առաջին ատյանի դատարան (ՀՀ ՔՂՕ 24-րդ հոդված, 3-րդ մաս):**

Հարկ է նշել, որ բացառիկ ընդդատության այս կանոնը ենթարկվել է էական փոփոխության՝ ի տարբերություն նախկին իրավակարգավորման: Այսպես, 1998 թ. ընդունված ՀՀ ՔՂՕ 85-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ ժառանգատուի պարտատերերի հայցերը հարուցվում են ժառանգական գույքի կամ նրա հիմնական մասի գտնվելու վայրի դատարան: Այս կարգավորումը ուներ մի շարք թերություններ: Այսպես, ժառանգատուի պարտատերերի կողմից ժառանգությունը ժառանգների տիրապետմանն անցնելուց հետո ժառանգական գույքի պահանջով նրա գտնվելու տեղում հայց հարուցել տրամաբանական չի թվում, որովհետև դեպքերի մեծամասնությամբ այդ գույքն այլևս իր նախկին տեղում չի գտնվում, ժառանգներն այն իրար միջև բաժանած և իրացրած են լինում, նրանցից ոմանք հօգուտ մյուս ժառանգների հրաժարված են լինում իրենց բաժիններից կամ իրենց բաժնի դիմաց ստացած են լինում փոխհատուցում և այլն: Այսպիսի դեպքերում բացառիկ ընդդատության կանոնի կիրառումը և տարբեր վայրերում բնակվող ժառանգներին ժառանգական գույքի գտնվելու նախկին տեղում դատարան կանչելը անիմաստ են դառնում:

Հետևաբար, բացառիկ ընդդատության այս կանոնի դեպքում հայցի հարուցումը ժառանգական գույքի գտնվելու վայրի հետ պայմանավորելը արդյունավետ չէ: Այսպես, ժառանգատուի պարտատերերի հայցերը հիմնականում ուղղված են լինում ոչ թե ժառանգական գույքի, այլ ժառանգների դեմ, որոնցից էլ ակնկալում են ստանալ իրենց պահանջների բավարարումը: Ուստի գործող ՀՀ ՔՂՕ-ն հայցի հարուցումը պայմանավորել է ոչ թե ժառանգական գույքի գտնվելու վայրի դատարանով, այլ ժառանգների կամ կտակակատարի (կտակում նշված կտակ կատարող անձ) հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրի առաջին ատյանի դատարանով:

Սակայն, մեր կարծիքով գործող ՀՀ ՔՂՕ-ի 24-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կանոնը չի կարող դիտարկվել որպես բացառիկ ընդդատության ենթակա:

Քննարկվող նորմի առաջին մասով հայցի հարուցումը կապվում է ժառանգի կամ կտակակատարի հաշվառման կամ բնակության վայրի հետ, որը ինքնին ընդհանուր տարածքային ընդդատության կանոն է: Երկրորդ մասով հայցի հարուցման վայրի դատարան է դիտվում ժառանգության բացման վայրի առաջին ատյանի դատարանը: Դրանցից երկուսն էլ կարող են չհամընկնել ժառանգական գույքի գտնվելու վայրի հետ: Ավելին, բացառված չէ, որ ժառանգները լինեն մի քանիսը, և նրանց հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրերը գտնվեն տարբեր տեղերում: Այդ դեպքում հարց է առաջանում՝ որ վայրի դատարանը պետք է քննի ներկայացված հայցը: Հետևաբար գտնում ենք, որ նշված կանոնը չի կարող համարվել բացառիկ ընդդատության, քանի որ այն չի բավարարում վերջինիս սահմանման չափանիշները:

Այսպես, մենք առանձնացրել էին բացառիկ ընդդատության սահմանման երկու չափանիշ՝ հայցի օբյեկտ համարվող անշարժ գույքը և դրա նկատմամբ ներկայացված գույքային պահանջը: Մինչդեռ քննարկվող պարագայում հայցի օբյեկտ է դիտարկվում ժառանգական գույքը, որը կարող է բաղկացած լինել թե՛ անշարժ, թե՛ շարժական գույքից, թե՛ դրամական միջոցներից: Ինչ վերաբերում է ժառանգական գույքի նկատմամբ ներկայացվող պահանջին, ապա քննարկվող նորմում ևս որևէ սահմանափակում չկա, ինչը նշանակում է, որ կարող է ներկայացվել ցանկացած պահանջ, օրինակ, գումարի բռնագանձման: Ասվածի հիման վրա՝ կարծում ենք, որ նշված կանոնը չի կարող դիտվել որպես բացառիկ ընդդատության կանոն, ուստի այն պետք է հանել քննարկվող հոդվածից:

Միաժամանակ առաջարկում ենք այդ կանոնը նախատեսել այլընտրանքային ընդդատության կանոնների շարքում: Հարկ է նշել, որ, օրինակ, Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքով այն դիտվում է որպես այլընտրանքային ընդդատության կանոն<sup>1</sup>:

*Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

*«Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցը ներկայացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:*

*Այն դեպքերում, երբ ներկայացված պահանջները վերաբերում են մի քանի անշարժ գույքերի, որոնք գտնվում են տարբեր դատարանների տարածքներում, հայցը ներկայացվում է այդ անշարժ գույքերից որևէ մեկի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան՝ հայցվորի ընտրությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ այդ վայրի դատարաններից մեկը պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանն է: Այդ դեպքում հայցը ներկայացվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան, որտեղ գտնվում է անշարժ գույքը:*

*2. Անշարժ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:*

*3. Միաժամանակ բացառիկ և այլընտրանքային ընդդատություն ունեցող պահանջներով հայցը ներկայացվում է այլընտրանքային ընդդատության կանոններով սահմանված առաջին ատյանի դատարան»:*

*Միաժամանակ, ՀՀ ԲԴԾ-ի 24-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը, որի համաձայն՝ ժառանգատուի պարտատիրոջ հայցը ներկայացվում է ժառանգի կամ կտակակատարի հաշվառման (գտնվելու) կամ բնակության, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի առաջին ատյանի դատարան, առաջարկում ենք նախատեսել ոչ թե որպես բացառիկ ընդդատության, այլ այլընտրանքային ընդդատության կանոն:*

<sup>1</sup>Տե՛ս Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը:

## ИСКЛЮЧИТЕЛЬНАЯ ПОДСУДНОСТЬ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

**Ани Микаелян**

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

---

Статья посвящена изучению одного из видов территориальной подсудности в частности исключительной подсудности. В статье автор попытался определить цель установления исключительной подсудности и критерии для определения этого типа подсудности. Предметом обсуждения стал вопрос соотношении исключительной подсудности и правил альтернативной подсудности, в результате чего автор пришел к выводу, что предпочтение следует отдавать правилам альтернативной подсудности. Также тщательно были проанализированы отдельные правила исключительной подсудности, предусмотренные в ГПК Республики Армения.

В рамках статьи автор сформулировал и обосновал ряд замечаний и рекомендаций, направленных на совершенствование исключительной подсудности.

## EXCLUSIVE JURISDICTION IN CIVIL PROCEEDINGS

**Ani Mikayelyan**

*PhD student of the YSU Chair of Civil Procedure*

---

The article is devoted to the issues related to the exclusive jurisdiction of one of the types of territorial jurisdiction. In the article, the author has attempted to distinguish between the purpose of establishing exclusive jurisdiction and the criteria for determining this type of jurisdiction. The subject of discussion was the issue of the relationship between exclusive jurisdiction and alternative jurisdiction, as a result of which the author came to the conclusion that preference should be given to the rules of alternative jurisdiction. Specific rules of exclusive jurisdiction have also been thoroughly analyzed in the draft Civil Procedure Code of the Republic of Armenia.

Within the article the author has formulated and substantiated a range of suggestion and remarks aimed at amending the exclusive jurisdiction.

**Բանալի բառեր-** բացառիկ ընդհատություն, այլընտրանքային ընդհատություն, դատարանի շահ, սահմանափակող նորմ, բարելավող նորմ, անշարժ գույքի հետ կապված վեճեր

**Ключевые слова:** *исключительная подсудность, альтернативная подсудность, интерес суда, ограничительная норма, улучшающая норма, споры о недвижимости*

**Key words:** *exclusive jurisdiction, alternative jurisdiction, court benefit, limiting norm, Improving norm, real estate disputes*